



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

2020 թվականի *հունվարի 16-ի* N 99-Վ

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 28/22 ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի ԹԻՎ 57-Ա ՈՐՈՇՄԱՆ 1-ԻՆ, 2-ՐԴ ԿԵՏԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ԻՍԿ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 9-Ի ԹԻՎ 1/1, 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-Ի ԹԻՎ 16/2 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 13-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 2-րդ և 5-րդ մասերով Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Ուժը կորցրած ճանաչել Հաշվեքննիչ պալատի 2019 թվականի դեկտեմբերի 24-ի «Հաշվեքննիչ պալատի 2018 թվականի ապրիլի 9-ի թիվ 1/1 որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու և 2019 թվականի հուլիսի 29-ի թիվ 16/2 որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ 28/22 որոշումը և Հաշվեքննիչ պալատի 2020 թվականի մայիսի 26-ի «Հաշվեքննիչ պալատի 2018 թվականի ապրիլի 9-ի թիվ 1/1 որոշման մեջ լրացում և փոփոխություն կատարելու և 2019 թվականի հուլիսի 29-ի թիվ 16/2 որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ 57-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերը:
2. Հաշվեքննիչ պալատի 2018 թվականի ապրիլի 9-ի «Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատում պետական ծառայության պաշտոնների հաստիքացուցակը

և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին»
թիվ 1/1 որոշման հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 31-րդ կետով՝
«31. Մկրտչյան Դավիթ գլխավոր մասնագետ 46-32.2-Մ2-3 ծածկագրով»:

3. Հաշվեքննիչ պալատի 2019 թվականի հուլիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի քաղաքացիական ծառայության մի շարք պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 16/2 որոշման 1-ին կետի «Հաշվեքննիչ պալատի երկրորդ վարչության գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 46-32.2-Մ2-2)» բառերից հետո լրացնել «Հաշվեքննիչ պալատի երկրորդ վարչության գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 46-32.2-Մ2-3)» բառերը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում իրագելմանը հաջորդող օրվանից:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ



Լ. ՅՈՒՅԱՆ